# Արձանագրություն 02

«ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-58/26» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Գյումրի

09 հուլիսի, 2026թ., ժ 17:00, ք. Գյումրի, Վարդանանց հրապարակ 1, Գյումրու համայնքապետարան

Հանձնաժողովի նախագահ՝

1) Ռուբեն Գևորգյան – համայնքի ղեկավարի օգնական,

Հանձնաժողովի անդամներ՝

2) Դմիտրի Մանվելյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

3) Վարդան Զարիֆյան – բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի առաջատար մասնագետ,

4) Դավիթ Հարությունյան - բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի գլխավոր մասնագետ,

5) Հրաչիկ Վարդանյան - Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար,

Հանձնաժողովի քարտուղար՝

6) Արմինե Սարգսյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ

1. «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-58/26» ծածկագրով գնանշման հարցման գնումների միջոցով առաջարկների բացման վայրի, գնային առաջարկների ներկայացման, գնահատման, արդյունքների հաստատման /մրցույթի արդյունքների ամփոփման/ մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

1.1 Գնային առաջարկ ներկայացնելու մասին 29.06.2026թ. էլեկտրոնային եղանակով ընթացակարգի հրավերի տեքստերը միաժամանակ հրապարակվել է www.gnumner.am և www.armeps.am ինտերնետային կայքերում:

1.2 Գյումրի համայնքի կարիքների համար **«Գյումրի համայնքի թվով երկու փողոցների նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման ծառայությունների»** ձեռքբերման համար «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-95/25» ծածկագրով գնանշման հարցման գնումների համաձայն գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

| N | Անվանումը | Հասցե |
|---|---|---|
| 1. | «ՄԱԼԿ» ՍՊԸ | Ք. Գյումրի, Տիգրան Մեծի 1 |

1.3 Գնային առաջարկ պարունակող հայտերը բացվել են www.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով:

1.4 Տվյալներ հայտերի ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.

- Գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացրած հայտերը կազմվել և ուղարկվել են հրավերի պահանջներին համապատասխան:

1.5 Տվյալներ հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.

- գնային առաջարկ ներկայացրած մասնակիցները ներկայացրել են գնման ընթացակարգին մասնակցելու դիմում, գնի առաջարկ և հրավերով պահանջվող հավելվածները:

1.6. Մասնակիցների առաջարկած գները

| Հ/Հ | Ապրանքի անվանում | «ՄԱԼԿ» ՍՊԸ | | Նախահաշվային գին |
|---|---|---|---|---|
| | | Ընդհանուր արժեքը առանց ԱԱՀ | Ընդհանուր արժեքը՝ ներառյալ ԱԱՀ-ն | ներառյալ ԱԱՀ-ն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | Գյումրի քաղաքի Աճեմյան փողոցի /Տերյան փողոցից հարավ/ հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություններ | 1 250 000 | 1 500 000 | 1 550 000 |
| 2. | Գյումրի քաղաքի Ջիվանու փողոցի /Տերյան փողոցից հարավ/ հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման և փորձաքննության եզրակացության տրամադրման ծառայություններ | 795 000 | 954 000 | 1 026 000 |

| /Հ | ՄԱՍՆԱԿՑԻ ՀԱՅՏԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ | ԳՆԱՀԱՏՈՒՄ |
|---|---|---|
| 1 | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ<br>(Մասնակցի նմանատիպ փորձառություն, լիցենզիա և լիցենզիայի ներդիր) | Բավարար / Անբավարար |
| | | ՀԱՄԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆ |
| 2 | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ (ՏԱ)<br>(Աշխատակազմ (ՏԱ)+Տեխնիկական միջոցներ) | 70 % |
| 3 | ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ (ԳԱ) | 30 % |

| Հ/Հ | Համապատասխանության, տեխնիկական և գնային առաջարկների չափանիշներ | Համապատասխանության, տեխնիկական և գնային առաջարկների գնահատման (չափման) առավելագույն միավորներ | Գնահատման համար սահմանված պահանջներ |
|---|---|---|---|
| 1 | ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ | | |
| | այդ թվում՝ | | |
| 1.1 | Մասնակցի նմանատիպ Փորձառություն | բավարար | Մասնակցի փորձառությունը գնահատվում է բավարար՝ հրավերի պահանջով նախատեսված նմանատիպ* աշխատանքների նկատմամբ՝ հրավերով պահանջվող լիցենզիայի և դրա ներդիրի շրջանակներում մատուցված ծառայության մասով՝ հայտը ներկայացվելու տարվա և դրա նախորդող 3 տարիների ընթացքում պատշաճ մատուցված ծառայությունների դեպքում |
| 1.2 | Լիցենզիա և լիցենզիայի ներդիր | բավարար | Մասնակցի չափանիշը գնահատատվում է բավարար՝ հրավերով պահանջվող բոլոր լիցենզիաների և դրանց ներդիրների առկայությամբ |
| 2 | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ (ՏԱ) | 100 միավոր | |
| | այդ թվում՝ | | |
| 2.1 | Աշխատակազմ (ՏԱ) | 70 միավոր | Մասնակցի աշխատակազմում ներգրավված մասնագիտական ռեսուրսի փորձառությունը և որակավորումը գնահատվում է որակավորումը |

| | | | |
|---|---|---|---|
| | | | **հավաստող փաստաթղթերի և հրավերով սահմանված նմանատիպ օբյեկտների մասով կատարված աշխատանքների մասին գործատուի գրավոր հավաստող փաստաթղթերի, կամ քաղաքաշինական պարզ փորձաքննության դրական եզրակացություն կամ այլ հիմնավորող փաստաթղթերի հիման վրա: Աշխատակազմի գնահատման նվազագույն շեմը սահմանվում է 10 միավոր: Նվազագույն միավորը ստանում է աշխատանքային ռեսուրսների գնահատման արդյունքում բոլոր մասնագետների հրավերով սահմանված նվազագույն պահանջներին բավարարելու դեպքում (այդ թվում լրացվում է սույն հրավերի Հավելված N 1.3-ը՝ յուրաքանչյուր մասնագետի համար):** |
| 2.2 | **Տեխնիկական միջոցներ** | **30 միավոր** | Տեխնիկական միջոցներ<br>Անվանումը \| Մոդելը,<br>Բացարձակ նիշերի չափման գործիք \| **ցանկացած**<br>***Էլեկտրոնային փախիմետր*** \| **ցանկացած**<br>GPS համակարգով գործարկվող գեոդեզիական գործիք \| **ցանկացած** |
| 3 | ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ (ԳԱ) | **100 միավոր** | **Մասնակցի գնային առաջարկը դիտարկվում է ոչ գնային պայմանների գնահատման համատեքստում՝ բացառելով վերջինիս էական ազդեցությունը ընկերությունը հաղթող ճանաչելու գործընթացում** |

**Հանձնաժողովը արձանագրեց՝**

- Ղեկավարվելով կարգի 40-րդ 5-րդ ենթակետով երկու չափաբաժինների մասով «ՄԱԼԿ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

**Հանձնաժողովը որոշեց՝**

- Հիմք ընդունելով Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը՝ «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ՀԲՄԾՁԲ-58/26» ծածկագրով գնման ընթացակարգի համար անգործության ժամկետ չի կիրառվում:
- Անգործության ժամկետին հաջորդող չորրորդ աշխատանքային օրը պայմանագիր կնքելու ծանուցում ուղարկել «ՄԱԼԿ» ՍՊԸ-ին:
- Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին կուղարկվի պայմանագրի նախագիծը, ինչն անհրաժեշտ է 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել և ներկայացնել պատվիրատուին: Անհրաժեշտ է նաև ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի տեսքով, ֆինանսական միջոցներ նախատեսված լինելու վերաբերյալ կողմերի միջև կնքվող համաձայնագրի դեպքում՝ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի տեսքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

Հանձնաժողովի նախագահ՝ ------------------------------ Ռուբեն Գևորգյան (ԳՊ/ԳԱՊ)

Անդամներ՝

------------------------------ Դմիտրի Մանվելյան (ԳՊ/ԳԱ)

------------------------------ Դավիթ Հարությունյան (ԳՊ/ԳԱ)

------------------------------ Վարդան Զարիֆյան (ԳՊ/ԲԱ)

------------------------------ Հրաչիկ Վարդանյան (ԳՊ/ԲԱ)

Քարտուղար՝ ------------------------------ Արմինե Սարգսյան (ԳՊ/ՄՀմ)